ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հուլիսի 30-ից օգոստոսի 11-ը

Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արսեն Սառիկյան – ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության պետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները

Ավստրիայի Հանրապետություն՝ քաղաք Վիեննա, հուլիսի 30-ից օգոստոսի 11-ը:

3. Հրավիրող կողմը

Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF) Վիեննայի համատեղ ինստիտուտ (Joint Vienna Institute):

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել «Մակրոտնտեսական վերլուծություն (Macroeconomic Diagnostics)» թեմայով դասընթացին: Դասընթացը միտված էր ուժեղացնելու տվյալ երկրի մակրոտնտեսական իրավիճակը համապարփակ գնահատելու մասնակիցների կարողությունները՝ ներառյալ տնտեսության զարգացման միտումները, խոչընդոտները, ֆիսկալ ու դրամավարկային քաղաքականությունը, ֆինանսական կայունությունը: Դասընթացը հնարավորություն տվեց մասնակիցներին ձեռք բերել մակրոտնտեսական վերլուծությունների գործնական հմտություններ, գործիքներ՝ միաժամանակ մատնանշելով, թե ինչպես կարող են այդ հմտությունները կիրառվել տվյալ տարածաշրջանին (երկրին) բնորոշ մակրոտնտեսական իրավիճակը վերլուծելու ու քաղաքականության մշակման գործընթացում ներդրում ունենալու համար:

5. Քննարկված թեմաները

Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կատարվել է մակրոտնտեսական վերլուծություն Թուրքիայի օրինակով, որի շրջանակներում դիտարկվել են

մակրոտնտեսական ցուցանիշների կտրուկ անկումները, հաղթահարման հնարավոր ուղղությունները, ձեռնարկված քայլերը:

ՈՒսումնասիրվել են չորս մակրոտնտեսական հատվածներ (իրական, հարկաբյուջետային, ֆինանսական և արտաքին), որոնք փոխկապակցված են հաշվապահական և վարքագծային հարաբերությունների միջոցով և իրենց հերթին ազդում են տնտեսական կապերի վրա:

Դասընթացի ընթացքում կատարվել են մակրոտնտեսական վերլուծություններ, խնդիրների և հիմնական ոլորտների ուսումնասիրություններ, կանխատեսումներ, բացահայտվել են մակրոտնտեսական միջավայրի խոցելիությունը և ռիսկերը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Դասընթացի ընթացքում կազմակերպվել են խմբային քննարկումներ՝ առաջադրված խնդիրների լուծման նպատակով: Մասնակիցներին տրվել են առաջադրանքներ, որոնք հաջողությամբ հաղթահարվել են դասընթացի շրջանակներում ձեռք բերված գիտելիքների և փորձի հիման վրա:

Դասընթացի արդյունքում մասնակիցները ձեռք բերեցին հմտություններ, որոնց շնորհիվ կկարողանան.

1) հաշվարկել պոտենցիալ ՀՆԱ-ն, բացերը (output gaps) և ախտորոշել տնտեսության խոցելի հատվածները (ոլորտները),

2) գնահատել պետության կողմից վարվող ընթացիկ հարկաբյուջետային, դրամավարկային, փոխարժեքի և ֆինանսական քաղաքականության արդյունավետությունը,

3) գնահատել մակրոտնտեսական կապերը և կայունությունը, այդ թվում՝ ֆինանսական հատվածի կայունության ցուցանիշների վերլուծության միջոցով,

4) գնահատել տնտեսության միջնաժամկետ հեռանկարները, հատկապես պետական և արտաքին պարտքի կայունությունը,

5) բացահայտել հնարավոր արտաքին և ներքին տնտեսական ռիսկերն ու տնտեսության խոցելիությունը և մշակել դրանց վերացմանն ուղղված քաղաքականություն:

Դասընթացից առաջ և հետո մասնակիցները թեստավորվել են, իսկ վերջում Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից տրվել են հավաստագրեր՝ «Մակրոտնտեսական վերլուծություն (Macroeconomic Diagnostics)» թեմայով դասընթացը հաջողությամբ ավարտելու մասին:

Գործուղման ծախսերը (ավիատոմս, կացություն, օրապահիկ) ապահովվել են Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից:

7. Ստորագրությունը, ամսաթիվը

Արսեն Սառիկյան

16.08.2023թ.